ՈՂՋԵՐՁՆԵՐ „ՄՇԱԿԻ“ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

№ 16

(ՅԱՒԵԼՈՒԱԾ „ՄՇԱԿԻ“ 268-ի)

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Մշակի» խմբագրութիւնը հրատարակեց «Մշակի» 40-ամեակի առիթով ստացած յօդուածները, ուղերձները և շնորհաւորութիւնները թէ լրագրի սիւնակներում և թէ առանձին յաւելուածներում. Մենք անկարող եղանք լոյս ընծայել բոլոր նիւթերը՝ նրանց շատութեան պատճառով։

Ներկայ յաւելուածում մենք զետեղում ենք ուղերձների և շնորհաւորութիւնների մի մասը, անկարող լինելով տեղ տալ ընդարձակ յօդուածներին։

«Մշակի» խմբագրութիւնը օգտւում է դէպքից նորից շնորհակալութիւն յայտնելու բոլոր հիմնարկութիւններին և անձերին, որոնք յայտնեցին իրանց համակրութիւնները «Մշակի» խմբագրութեանը և նրա գործողներին։

ՈՂՋՈ՜ՅՆ «ՄՇԱԿԻՆ»

Հայրենի խոպան դաշտերի մշակմանն ու արգասաւորմանը մեծապէս նպաստող «Մշակին» ենք բերում նոյն այդ դաշտերից խլուած հայ մշակների և արհեստաւորների ներկայացուցիչներս մեր անկեղծ ողջոյնները նրա 40 ամեայ յոբելեանի առիթով։

Մեր սրտագին մեծարանքը այն «Մշակին», որը խօսեց մեր դարդ ու ցաւից և իր գիտցած ձևով ուղեցոյց եղաւ մեզ ու մեր գեղջուկ իւրայիններին յընթացս 40 տարիների։

Մեր խնդակցութիւնը «Մշակի» յոբելեանին որովհետև «Մշակը» մայր հողից կտրված և ամայամերձ ծանելոյցների ներքոյ տնքացող գործարանի պարիսպներից ներս շպրտված մշակ բանուորներիս, գիւղից, գիւղական խրճիթից պոկված նախկին ռանչպարներիս, այստեղ, կապիտալի այս կրակարանումն էս չը մոռացաւ և, որչափ կարելի էր, պաշտպանեց մեզ, տալով միաժամանակ իր էջերում այնպիսի յօդուածների մի շարք մեր շահերը լիաբուռն կերպով պաշտպանող անձանց, որոնցից մենք խելք ու խրատ սովորեցինք մեր վիճակի բարւոքման համար։

Մեր սրտաբուխ երախտագիտութեան հաւատիքը հայ խաւարամած իրականութեան մէջ առաջին անգամ լուսամիտ և առաջադէմ գաղափարներ արծարծող «Մշակին»։

Յաւերժ յիշատակ խիզախ հրապարակախօս Գրիգոր Արծրունուն։

Դեռ երկար տարիներ բեղուն կեանք և անսայթաք գործունէութիւն «Մշակի» ներկայ ղեկավարներին։

Կեցցեն, բիւր անգամ կեցցեն «Մշակի» բազմաթիւ ժրաջան աշխատակիցներն ու Թղթակիցները։

Սիմոն Մալեան, Մկրտիչ Պալեան, Ստ. Կիւլեսերեան, Ա. Մկրտչեան, Գէորգ Վռամեան, Վահ. Ոսկերչեան, Հրանդ Մկրտչեան, Գէորգ Մինասեան, Կիրակոս Մարկոսեան, Յար. Արշակեան, Բալասան Պալիեան, Կոր. Ադաջանեան, Վահ. Կիւլեսերեան, Վ. Եղիզարեան, Մ. Կիրակոսեան, Ս. Բաբաջանեան, Խաչ. Յարութիւնեան, Ա. Յակոբեան, Աբ. Յարութիւնեան, Արշ. Տէր-Ոսկանեան, Վահ. Թէհմիրճեան, Մինաս Մկրտչեան, Արշակ Մէհտարճեան, Յար. Մէհտարճեան, Խաչիկ Մանասէրեան, Ռուբէն Պալոեան, Ստ. Յակոբեան, Ան. Աղաջանեան, Յովհ. Ռոստոմեան, Ան. Թարխանեան, Арм. Ростомянъ, Արտէմ Եղիզարեան, Յովհ. Շագինեան, Նիկ. Նիկողայոսեան, Մկ. Ղարիբեան, Գէորգ Ղորգլէչեան, Мигранъ Мейтарджянъ, Ռուբէն Մկրտչեան, Աս. Սայաթեան, Ալ. Բարաջեան, Մկրտիչ Բարաճանեան, Յովհ. Պալասանեան, Ենովք Տօխսանեան, Արմենակ Պապոեան, Յակոբ Աղապապեան։

Թիֆլիս

ՈՂՋՈՅՆ ՀԵՌԱՒՈՐ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԷՆ

Վան, 7/20 մայիս

Ողջունում ենք մեծ հայի՝ մեր անմահ Գրիգոր Արծրունու հիմնած «Մշակ» պատուական լրագրի 40-ամեայ յոբելեանը, օրն եղած է հաւասարապէս թէ ռուսահայերու և թէ Թիւրքահայերու լուսաւոր գաղափարներու մեծ ռահվիրան։ Թող շատ ապրի հայութեան մէջ «Մշակը». և ինչպէս 40 տարի մշակեց և լուսաւորեց հայութեան ամեն խաւերու մտաւորական ոյժերը՝ ըլլալով այժմեան մեր աչքի ընկնող մտաւորականներու առաջնորդն և մեկենասը, նոյնպէս ապրի և 100-ամեակը տօնելու արժանանայ։ Յարգանք Արծրունիէն ցարդ «Մշակը» վարող պատ. խմբագրական կազմին. կը մաղթենք, որ նոյն կերպով և եռանդով շարունակեն ի փառս հայուն։

Տիգրան և Յարութիւն Կաքաւեաններ

ՈՂՋՈՅՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՒԱՌԻ ԳՈՄ ԳԻՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԻՑ

Վերջին տարիների դառն փորձերը մեզ ցոյց տուին, թէ որքան հայ ժողովուրդներս անհամապատասխան ենք մեր բուն նպատակին։ Մեր դէմ մղված ներքին հալածանքների շրջանում ոչ ոք չը կարողացաւ հրապարակ դուրս գալ իբրև պատրաստի կազմակերպված մի լուրջ ոյժ։ Միայն մեր պաշտելի «Մշակն» էր, որ ամեն ժամանակ այստեղ և ամեն տեղ պաշտպան էր հանդիսանում խեղճ ու կրակ գիւղացու ցաւին ու դարդին և հասկանում էր մեր կեանքի այդ անբնական երևոյթի պատճառը։ Արձանագրելով այդ տխուր իրականութիւնը՝ «Մշակը» շարունակ նկատել է, որ պէտք է զտել գիւղացիութեան շարքերը, պէտք է նրան ենթարկել բիւրեղացման։ «Մշակն» է, որ գիտակցում է հայ ժողովրդի և հայ եկեղեցու կարիքներն ու շահերը։ Եթէ մենք հետևէինք նրա ուղղութեանը, մօտիկ ապագայում կունենայինք ընդունակ և պատրաստի լաւ գիւղացիներ։ Ցանկանում ենք թէև նուիրվել ու ծառայել ձեր վեհ գաղափարին և կենդանի օրինակին, բայց՝ ցաւօք սրտի՝ չը կայ մեզ խրախուսող, և պէտք է խոստովանվել, որ այս նոր գիտակցութեան արտայայտողն ու եռանդուն քարոզողը, այս նոր ճանապարհը մեզ ցոյց տուողն ու մեր առաջ բաց անողը եղաւ «Մշակը», որ խմբագրվում է շնորհալի հրապարակախօս պ. Ալ. Քալանթարի ձեռքով Թիֆլիսում։ Մենք, Գոմ գիւղի համայնքս, այս բոլորը ի նկատի ունենալով ձեր անսահման մարդասիրութեան լի յոյսով ներկայացնում ենք 3 րուբլի փող՝ ի պատիւ ձեր 40-ամեայ յոբելեանին։

Յ. Տէր-Մարտիրոսեան, Զ. Սարգսեան, Խ. Տէր-Մարտիրոսեան, Մ. Թադէոսեան, Յ. Մովսիսեան, Մ. Սեւկեան, Բ. Թորոսեան, Գ. Գէորգեան, Ա. Յունանեան, Յով. Գրիգորեան, Ս. Ղազարեան, Ղ. Մովսիսեան, Ի. Ղազարեան, Մ. Վահրամեան, Մ. Գիւլոյեան, Կ. Գրիգորեան, Պ. Պետրոսեան, Բ. Մանուկեան, Մ. Սահակեան, Դ. Այվազեան, Ս. Յակոբեան, Յ. Խաչատրեան, Յ. Աստառեան, Յ. Միրզոյեան, Յ. Մարտիրոսեան, Ռ. Ծառուկեան, Բ. Ծառուկեան, Յ. Խաչատուրեան, Ղ. Համբարեան, Գ. Դէրջանեան, Մ. Վարդանեան, Մ. Յարութիւնեան, Պ. Առաքելեան, Ղ. Դէրջանեան, Մ. Յակոբեան, Ս. Մկրտչեան, Թ. Մելիքեան, Գ. Մելքոնեան, Գ. Ղուկասեան, Խ. Զրադեան, Թ. Աստատուրեան, Գ. Խաչատուրեան, Բ. Աստատուրեան, Մ. Եգնատոսեան, Վ. Յարութիւնեան, Ա. Եգնատոսեան, Յ. Տաքսասեան, Գ. Բանտիկեան, Դ. Պալլիկեան, Պ. Փիլոսեան, Յ. Սողոմոնեան, Ս. Սահակեան, Ս. Մուլեան, Մ. Ռուստեան, Մ. Աղապալեան, Ս. Ռափայէլեան։

«ՄՇԱԿԻ» ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ

(„Рѣчь“ լրագրի յօդուածը)

Թիֆլիսում հրատարակվող հայկական «Մշակ» լրագրի քառասնամեայ յոբելեանն է տօնում այսօր Կովկասը։

Պարբերական հրատարակութեան համար ընդհանրապէս քառասնամեայ գոյութիւնը քիչ չէ։ Բայց նա առանձին նշանակութիւն է ունենում ռուսական կեանքի պայմաններում, ուր երբեք, անցեալում թէ ներկայում, առաջադիմական թերթի գոյութիւնը կարճելու համար հարկ եղած արգելիչ և սահմանափակիչ միջոցների պակասութիւն չի զգացվել։

Կովկասը, ժողովուրդների այդ կալէյդօսկօպը, մեր վարչականների ռուսաւորական փորձերի համար ներկայացնում էր լայն ասպարէզ, որոնցից իւրաքանչիւրն իր տաղանդի չափով աշխատում էր խեղդել կովկասցիների ինքնագործունէութեան, լուսաւորութեան և կուլտուրայի բարիքներին վերաբերեալ բոլոր փորձերն ու հակումները։

Պանռուսական կասկածամտութիւնը խիստ է առանձնապէս ծայրագաւառում։ Divide et impera-ի սկզբունքը այստեղ լայն գործադրութիւն է ստանում։

Այդպիսի պայմաններում, օտար առաջադիմական թերթի ամբողջ 40-ամեայ գոյութիւնը աւելի ևս մեծ հասարակական նշանակութիւն է ունենում այն պատճառով, որ «Մշակն» այդ ժամանակվայ ընթացքում երբեք իր առաջադիմական դրօշակին չի դաւաճանել։ Ռուսիկանական խիտ ցանկապատերի միջով տարաւ նա իր յոյսերի և հաւատալիքների բաժակը, չը ցայտեցնելով նրանից ոչ մի կաթիլ։

«Մշակ» լրագրի հիմը դրեց յայտնի հայ հրապարակախօս Գրիգոր Արծրունին 1872 թւի յունվարին։ Թէև ազգասիրութիւնից հեռու, բայց լաւագոյն մտքով հայրենասէր, հումանիստ Արծրունին քսան տարի խմբագրեց «Մշակը», տալով մասսաների գիտակցութեանը հասարակական, ժողովրդական կեանքի սկզբունքներ, իսկ ազգային կուլտուրայի վերածնութեան համար նոր, բէալ ճանապարհներ և ճշմարիտ պատուէրներ։

Այն դրօշակը, որին Գրիգոր Արծրունին իր ամբողջ կեանքը նուիրեց, անաղարտ կերպով ժառանգվեց իր խմբագրական յաջորդներին, որոնք հայ ժողովրդի ծառայութեան համար հիմք ընդունեցին իրանց ուսուցչի կտակները։

Հայ ժողովրդի վրա փռուլ եկող թշուառութեան տարիներում «Մշակի» ձայնը բարձր էր հնչում։ Նա իր շուրջը համախմբեց ցրված հասարակութիւնը, քանիցս նա օգնեց, յուզված կեանքը խաղաղացրեց և հանգստացրեց։ Սասունի ջարդի կօշմար օրերում, երբ Թիւրքահայաստանի գիւղերը հայկական արիւնով էին կարմրում, երբ հազարաւոր տառապած, քայքայված մարդիկ կարմիր Համիդի գազանութիւններից Անդրկովկաս էին փախչում, «Մշակը» սուլթանի դժբաղդ զոհերին օգնեց։ Լրագրի ձայնը, որ հայ հասարակութեան բոլոր խաւերում կատարեալ վստահութիւն էր ներշնչել, սրտանց էր լսվում, ստանում էր առատ նուիրաբերութիւններ, որոնցով բազմահազար մարդկանց թշուառութիւնը թեթևացնում էր։

Հայ-Թուրքական երկպառակութիւնների մռայլ օրերում, երբ պրօվօկացիան Թուրք մասսաների ֆանատիկոսութիւնն էր բորբոքում, երբ գիւղերում և քաղաքներում գնդակներն էին տրաքվում, երբ սև, տգէտ, ֆանատիկոսացած վոհմակները Կովկասի մայրաքաղաք փոխարքայի աթոռանիստն էլ պաշարեցին, «Մշակն» իր հաշտութեան քարոզով հանգստացրեց բորբոքված կրքերը, ապացուցեց, որ թշնամութեան համար ամենափոքր առիթ իսկ չը կայ, և հրաւիրեց ժողովուրդներին միութեան և եղբայրութեան։ «Մշակի» անկեղծ և արդարացի քարոզը նպատակին հասաւ։ Թաթարական շարժման պարագլուխները հաւանականօրէն առաջին անգամ այն ժամանակ պարզեցին իրերի իսկական դրութիւնը, հասկանալով որ ուրիշի ձեռքին խաղալիք են։ Եւ ահա ամեն տեղ խառն կօմիտէտներ կազմվեցին, որոնց մէջ ընդունվեցին Թուրք և հայ հասարակութիւնների ամենից աւելի յարգված գործիչները։ Այդ կօմիտէտներն իրանց նպատակ դրին մասսաների հանգստացումն ու հայերի և Թուրքերի հին բարեկամական յարաբերութիւնների վերականգնումը։ Այդպէս վերջացաւ պրօվօկացիայի միջոցով առաջացած հայ-Թիւրքական ընդհարումը։

Ժողովրդին մատուցված երկարամեայ ազնիւ ծառայութիւնը, նրա կուլտուրայի ծաղկման համար, ստեղծեց «Մշակի» համար ռեպուտացիա, որին Կովկասի մամուլի օրգաններից շատ քչերը արժանացան։

«Մշակն» ունի համախոհներ Կովկասի ազգաբնակութեան բոլոր խաւերում, առանց ազգի և կրօնի խտրութեան։

Н. Ах.

ՀԵՌԱՒՈՐ ԱՐՁԱԳԱՆՔ

Սրանում ներփակում ենք Հօնկօնգ-Շանհայի դրամատան Թիւ 48/380 10 ոսկւոյ մի փոխանակագիր և խնդրում ենք ստանալ այս գումարն որպէս նուէր պատուական և բազմարդիւն «Մշակի» յոբելեանի առթիւ։

«Մշակն» ընթերցողներ է ունեցել նաև Ջաւայում, աշխարհիս այս հեռու անկիւնում, և Արծրունւոյ անունը միշտ սիրով, եռանդով և մեծարանքով է յիշվում։

Մաղթելով պատուական «Մշակի» ազգօգուտ աշխատութեան յարատև աջողութիւն՝

Յարգանօք մնամք՝

Ի դիմաց Ատենին Յանձնանանց
Հայ Ազգ. Հաստատութեանց Ջաւայի
Նախագահ՝ Յ. Տէր-Գալստեան
Ատենադպիր՝ Մ. Ն. Տէր-Գալստեան

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՈԹՈՂԻՆ

Թելաւ, 24 մայիսի

Այն քառասուն երկար ու ձիգ տարիների անսպառ և եռանդուն աշխատանքը, որ հայ կուլտուրայի կոթող «Մշակն» է կատարել, մեզ՝ Կ. Հ. Բ. Ընկ. Թելաւի ճիւղի վարչութեան անդամներիս բարոյապէս պարտաւորեցնում է անկեղծ սրտից շնորհաւորել «Մշակի» 40-ամեայ յոբելեանը և ցանկանալ նրան հայկական տատասկոտ ասպարիզում բազմամեայ բեղմնաւոր գործունէութիւն։

Նախագահ վարչութեան՝
Գէորգ Տէր-Սարգսեան
Անդամներ՝ Գրիգոր Գրիգորեանց, Աւագ Տէր-Աւագեանց, Արշակ Կիրակոսեան.
Անդամ քարտուղար՝ Խաչատուր Ք. Եզեկեան

ՎԱՍՏԱԿԱՒՈՐ «ՄՇԱԿԻՆ»

Թոյլ տուէք Միջին-Ասիայի հեռաւոր ծայրերի մէկից ողջունել բազմաշխատ «Մշակի» 40-ամեայ յոբելեանը, որ ամբողջ 20 տարի եղել է իմ լաւագոյն ձգտումների, մտքերի և զգացմունքների Թարգմանը։

40 տարի։

Ասել է՝ մաշել մի ամբողջ կեանք։ Անցնել համատարած փշերի ու տատասկների միջով, առաջ տանել անվեհերօրէն գաղափարի հսկայ դրօշակը, խորտակել անըմբռնելի ոյժով կեղծ բարեպաշտների կուռքերը, մաքրել ասպարէզից սուտը, կեղծիքը, անհերքելի փաստերով ջախջախել հակառակորդների կուռ բանակը՝—դա մարտիրոսութիւն է, դա ազատութեան համար մարտնչող հերոսի յաղթութիւնն է։

Դարերի կուռ ու խուլ խաւարը, որ հազարամեակների ընթացքում մաշել և կուրացրել է առանց այն էլ կոյր ամբոխը, որից անմասն չէր թողել հայ տառապող և աշխատաւոր ժողովուրդը, այսօր փարատվում է ու արշալոյսը շառագունում, որովհետև նոր-նոր գիտակցող հայ մասսան, զգալով մեր ազգային կուլտուրական առաջնակարգ գործօններից մէկի՝ «Մշակի» կատարած շինարար դերը վերջին 40 տարվայ ընթացքում, սկսում է գոչել՝ «կեցցէ «Մշակը» և իր անդուլ գործիչները», որ ամբողջ 40 տարվայ ընթացքում, կոկեցին ու շտկեցին հայ դարաւոր անզգայացած սիրտը, նախապաշարված զգացմունքները և ինքնաճանաչութեան դուռ բացին մոլորված հայ ժողովրդի առաջ։

Հեշտ է ասել 40 տարի, բայց դժուար է արձանագրել այն դառն չարչարանքները, որ կրել են «Մշակի» գործողները այդ չորս տասնեակ երկար ու ձիգ տարիների ընթացքում։

40 տարվայ պատերազմող հսկայ կարապետը, այսօր՝ երբ զօրաւոր կուրծքը դէմ արած ամբողջ հայութեան առաջ՝ անվախ համարձակ իր անթիւ պատերազմական դժուարին գործողութիւնների գովքն է երգում։

Թող հայութիւնը գնահատէ այդ հերոսին, Թող այդ անյաղթ կրծքի տակ տրոփող սիրտը փայլի իր ամբողջ մեծութեամբ, աւելի անվախ, աւելի համարձակ։

Փառք և պատիւ ձեզ, «Մշակի» ներկայ գործողներ, որ անդադրութեամբ տանում էք գաղափարի այդ մեծ դրօշակը։

Միքայէլ Յովակիմեան

Զարջուլ

ՀԱՆՐԱՅԻՆ «ՄՇԱԿԻՆ»

Խանքենդ (Շուշու գ.), 26 մայիսի

Անսահման ուրախութեամբ, զգացված սրտով ողջունում եմ «Մշակի» 40-ամեակը, ցանկանալով շատ 40-ամեակներ։ Ամբողջ 40 տարիների ընթացքում ուսուցիչ էիր և աղբիւր միակ դաստիարակութեան, հայոց ազգի պարծանք ու պատիւ։ Թող յարատև գնայ «Մշակը» իր գծած անշեղ ուղիով, Թող վառի մարդկանց սրտերը իր արձագանքով։ Թէպէտ և քո ուղիում բարձրացրած դրօշին 40 երկար տարիներ հանդիպել են ամեն կողմից խոչընդոտներ և պահանջել որոշ ծառայութիւն մի գաղափարի, բայց դու առանց սասանելու եղել ես, ամենայն մտքով, ընդհանուր ազգային գիտութեան մշակ։ Դուն չես խնկարկել ու քծնել այս կամ այն դասակարգին, Թայֆայականներին և այլն և այլն, այլ եղել ես և պիտի լինես ազատ և անկախ զանազան ծառայութիւններից։

Յաւերժ յիշատակ անմահ, օրինակելի մեծ Արծրունուն, որ ցանեց ամբողջ իր կեանքում բարոյական սերմեր։ Նրա գրիչը երգում էր անընդհատ ամբողջ 20 տարվայ ընթացքում ընդհանուր հայ հասարակութեան համար, անուշադիր թողնելով իր ուղիում զանազան վայրահաչութիւններ։

Խորին և անսահման յարգանք «Մշակի» անվհատ գործիչներին, Ալ. Քալանթարին և Հ. Առաքելեանին. ցանկանում եմ ի սրտէ կարող ոյժ, որ տանէք «Մշակի» դրօշը ծածանելով շատ տարիներ, ուր ձգտում է ձեր ազատ գիտութիւնը, ձեզ առաջնորդող, ձեր առողջ կրիտիկան։

Հայկ Աղաբաբեան

ԱՆՄԱՀ «ՄՇԱԿԻՆ»

Լաւ է ուշ, քան երբէք։

Քառասուն երկար ու ձիգ տարիներ, սկսած 70-ական թւականներից մինչև այսօր, «Մշակն» է եղել հայ կիսաւեր գիւղի, խոպան դաշտերի հերկողը, մեր տատասկոտ իրականութեան փշերը քաղողը, հայ դժբաղդ կեանքի անտերական նաւի ղեկը։ «Մշակը» կրթել է և կրթում է սերունդներ։ «Մշակը» եղել է գիւղինը, գիւղը՝ «Մշակինը». և «Մշակ» բառը այսօր հայ գեղջուկը, գիտակից՝ «Մշակով» սնված գեղջուկը, պատկառանքով է կրկնում։

«Մշակ»—դա մի ամբողջ ազգի մտաւոր կեանքի հարստութիւնն է, հայ մտրակող, հեռատես ու անշեղ միտքը։ Համարեա կէս դար, հազար ու մի փոթորիկների տակ, «Մշակը» պահպանել է իր գոյութիւնը, այսօր դառնալով կենսական պահանջ ամեն մի գիտակից հայ մարդու, հայ ընտանիքի համար։

Եւ «Մշակի» 40-ամեակին հայ ժողովրդի տուած արձագանքը փառաւոր ապացոյց է, հակառակ նեղսիրտ հակառակորդների ստոր ոտնձգութիւնների, որ հայ ժողովուրդը ապրում է «Մշակով» և «Մշակը»՝ հայ ժողովրդով։

Այդ պատճառով էլ «Մշակը» կանմահանայ և դեռ կապրի ու կապրի շատ 40-ամեակներ՝ դառնալով հայ խաւար կեանքի լուսատուն։

«Մշակը» անմահ է։

Եւ ողջոյն նրա անմահութեան...

Շ. Սահակեան

Դիլիջան, 15 մայիս.

ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵԿԱՄԸ

Շուշի, 1 յունիսի

Օրիցս չորս տարի առաջ՝ իմ հայրենիք Ղարադաղի Սղըղն գիւղում վեց տարեկան երեխայ էի։ Ամեն անգամ, երբ Շուշուց տուն էին վերադառնում մեր գիւղացի խեղճ մշակները, տատս ասում էր մօրս, թէ «աչքդ երեխաների վրա պահիր, գնամ տեսնեմ ինչ խաբար են բերել «Մշակից». ինչ է ասում, գրում մեզ համար «Մշակը»։ Տատիս այդ խօսքերը ես չէի հասկանում։ Կարճ ժամանակից յետոյ, համաձայն Շուշուց գրած հօրս նամակին, տատս և մայրս ինձ ճանապարհեցին Շուշի։ Շնորհիւ նպաստաւոր պայմանների՝ ես արագ կերպով անցայ այբբենարանը, Մայրենի Լեզուի Ա. և Բ. տարիները, և այժմ էլ դասերից յետոյ նստում եմ ու կարդում «Մշակը»։ Եւ յիշում եմ տատիս այն ժամանակվայ ինձ համար անհասկանալի խօսքերը։

40 տարի է ուրեմն, որ հայ մարդը ուրախութեան և տրտմութեան ժամանակ ուշքը դարձրած է եղել իր բարեկամ «Մշակին», թէ տեսնենք ինչ է ասում ու գրում «Մշակը»։ Ուրեմն, «Մշակ» բարեկամ, ընդունիր և իմ շնորհաւորանքը, որ 40 տարի մտածել ես մեզ հայերիս համար։

Խնդրում եմ ընդունեցէք և իմ նուէրը «Մշակի» ապահովութեան համար 7 կօպէկ (մարկայով)։ Այդ փողը աւելացրել եմ գրչածայրեր առնելուց։

Սարգիս Յար. Մելքումեան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅՈԲԵԼԵԱՆ

Մերվ, 26 մայիսի

40 տարի... Մի փառաւոր կեանք, որը անընդհատ, հայրական լուռ համբերատարութեամբ մշակել է ամայի տափարակները, ակօսել հաստ չերտեր ու ցանել ազնիւ պտուղներ։ 40 տարվայ պատրաստի, կենսունակ սերունդը մի գեղեցիկ ապացոյց է «Մշակի» անխոնջ աշխատանքի, աշխատանք, որը տանջալից մաքառումներով շարունակ բարձր բռնած լուսատու ջահը առաջ է քշել մթութեան մէջ խարխափող սերունդին։

Ես, երկար տարիներ աշակերտած լինելով «Մշակի» բարոյագիտական քարոզներին, այսօր, նրա 40-ամեայ յոբելեանի օրը, երախտագիտական պարտքս եմ զգում իմ աղքատիկ լուման ես (5 րուբլի) միացնելու «Մշակի» ֆօնդին, որպէսզի երկար տարիներ վայելենք նրա մտաւոր հիւթից։

Միքայէլ Գեօզչեան

ՅԱՐԳԵԼԻ «ՄՇԱԿԻՆ»

Բազումք են կոչեցեալք,
Բայց սակաւ են ընտրեալք։

Ծագումովը մեծ, տոհմովը մեծ, անունովն ես մեծ, զի Գրիգորդ անուն արթուն թարգմանի, ուրեմն այսպիսի մեծ մարդու սկսած և շինած գործն ես պիտոյ լինէր մեծ։

Նա իր հիմնած գործի ճակատին դրօշմեց մի փոքր բառ՝ չորս տառից բաղկացած, «Մշակ», և որովհետև նրան արթուն էին կոչած՝ նա ես գործով ցոյց տուեց, որ պարապ տեղ իրան չեն կոչած արթուն. և որպէս մի արթուն մշակ գիշեր և ցերեկ արեւն քրտինք թափեց՝ և ազգիս մտաւոր անդաստանը, որ մինչև այն ժամանակը փուշ և տատասկ էր բուսցնում, լի ամեն տեսակ օձերով և կարիճներով, վարեց, մաքրեց քսան երկար տարիներ, և մարդկանց սրտերում սէր առ ընկերն, ճշմարտութեան, անկեղծութեան և ազնւութեան սերմեր ցանեց, և այն՝ առանց իրան էժան նստելու, զի ի սէր ազգին՝ իր հալալ ժառանգութիւն եղած ահագին քարվանսարան էլ զոհեց. ինչու համար. որովհետև մտքումը դրած ունէր ոչ ուտել և ոչ խմել, մինչև որ լուսաւորէ կովկասահայերին. և ահա արթուն անուն մեծ Գրիգորի հիմնած «Մշակը», իր հիմնադրի մահից յետոյ, նոյնպէս ընտրեալ սանների ձեռքով նոյն շաւղով, ինչ շաւղով ընթացել էր լուսահոգին, շարունակեց առաջ. և լուսահոգին ճիշդ էր մարգարէացել ասելով՝ կը գայ ժամանակ — թէև այժմ հալածում են—ազգը կիմանայ «Մշակի» արած ծառայութիւնը առ ազգը. և իրօք որ, ահա յետ քառասուն երկար տարիներից հայ ազգը զգաց «Մշակի» մատուցած ծառայութիւնը առ ազգն՝ և մեծ շուքով է փառաւոր քառասնամեայ յոբելեան կատարել առանց մոռանալու նրա հիմնադրի անմահ յիշատակը օրհնելու. և դուք, ո՛ Ալէքսանդր Քալանթար և Համբարձում Առաքելեան և որք ընդ ձեզ էն աշխատակիցք «Մշակի» պարոնայք. կեցցէք շատ և շատ տարիներ՝ ազգիս անզուգական բարոյական մշակներդ. շնորհաւորում եմ «Մշակի» քառասնամեայ տարեդարձը և յոբելեանը. բարոյական մշակներիդ ցանկանում եմ առողջութիւն և կարողութիւն առաջ վարելու այս նուիրական հանդէսի շարունակութիւնը՝ հայերիս համար բարոյական սնունդ մատակարարելով աառաջնորդելու դէպի լաւը, բարին և գեղեցիկը. ուրեմն թող օրհնուած լինի արդարի յիշատակը, որ այդպիսի ժառանգութիւն և յաջորդներ թողեց մեզ։

Յակոբ ք. Պէօրէկճեանց

Իսմայիլ

ԽՈՐԻՆ ՑԱՐԳԱՆՔ

Քութայիս, 26 մայիսի

Գուցէ խմբագրութիւնը զարմանայ, թէ ես, որ 25 տարի շարունակ եղել եմ «Մշակի» հրատարակութեան գործակիցը, իսկ այժմ պատիւ ունեմ լինելու Իմէրէթի մայրաքաղաքի թղթակիցը, ինչու այսքան ուշացայ շնորհաւորելու նրա հրատարակութեան 40-ամեակը։

Իմ կատարեալ համոզմունքով՝ յոբելեանը պէտք է շնորհաւորել կամ նրա հանդէսի օրը, կամ հանդէսը կատարելուց անմիջապէս յետոյ։

Ուստի «Մշակի» 40-ամեայ հանդիսաւոր տօնախմբութեան օրը, հոգով մասնակից լինելով այդ պանծալի հանդէսին, սրտի խորքից շնորհաւորում եմ հայ մամուլի մէջ այդ եզակի թերթի 40-ամեակը, ցանկանալով որ նա աւելի փայլուն կերպով տօնէ և 50-ամեակը, ճակատը զարդարելով ոսկեայ պսակով։

Սրա հետ միասին ուղարկելով 10 րուբլի, խնդրում եմ միացնել այդ փշրանքը «Մշակի» ապահովութեան լուսոյ գանձանակին—ֆօնդին։ Ս. Նազարեան

ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅ ԱԶԳԻ ՍԻՐՈՎ ՏԱՆՋՎԱԾ «ՄՇԱԿԻՆ»

«Կեցցէ «Մշակը», կեցցէ հայ ազգի հերոս լրագիրը»։

Հարիւր հազարաւոր հայ մարդկանց բերանից դուրս թռաւ այդ խօսքերը, երբ իմացան, որ մութ ու խաւար տգիտութեան դէմ 40 տարվայ հերոսաբար կռւող «Մշակի», հայ ժողովրդի այդ անկեղծ բարեկամի յոբելեանական տօնն է կատարվում։

Հերոս էր «Մշակը» սուրբ գործի և գաղափարի կռիւների մէջ, ցոյց տուեց ապագայ սերունդին ճշմարտութեան ուղին։

Հերոս էր «Մշակի» հիմնադիր տաղանդաւոր Գրիգոր Արծրունին, որ երկար երեք տասնեակ տարիներ, ոչ մի արգելքի առաջ կանգ չառաւ՝ հարթելու քարքարոտ ուղին հայ հասարակութեան առաջ։

Այո, նա հերոսաբար իր մի խումբ գինակիցների հետ ձեռք-ձեռքի տուած՝ բարձրացրած ճշմարտութեան դրօշակը, ոչ մի նշանակութիւն չը տալով դաւանաշունչ մըրրկներին, անվերջ վառ պահելով լուսաւոր լապտերը՝ հայ խաւար ժողովրդի մէջ, ցոյց տուեց ամեն մի հեռաւոր հայի՝ առաջադիմութեան իսկական ուղին։ Եւ ես, հեռաւոր Ռուսաստանում ապրելով և ստանալով «Մշակը», մեծ բաւականութիւն եմ զգում կարդալով նրա ամեն տողը։ Ուստի, ցանկանալով մասնակից լինել «Մշակի» ապահովութեան ֆօնդին, ուղարկում եմ իմ լուման—15 ր.—և նոյնպէս 5 ր. տալիս եմ Սունդուկեանի արձանի բացմանը։

Կեցցէ «Մշակը» շատ և շատ տարիներ։

Կեցցեն «Մշակի» ազնիւ աշխատաւորները, Ա. Քալանթարը, Հ. Առաքելեանը և Յ. Տէր-Մարկոսեանը։

Ողջո՛յն «Մշակի» գաղափարի յաղթանակին։

Վորօնէժ Խաչատուր Վարդանեան

ԻՄ ԼՈՒՄԱՆ

Ռօստով Դ./Վ., 15 յուլիսի

Աշխատութիւնս դեռևս մամուլի տակ էր և մտադիր էի լոյս տեսնելուց հարիւր օրինակ ուղարկել «Մշակի» Յոբելեանական Յանձնաժողովին յօգուտ «Մշակի» ապահովութեան ֆօնդի, բայց մտադրութիւնս չը կատարեցի զանազան դատողութիւնների պատճառով...

Այո, «Մշակի» 40-ամեակը մեծ տօն էր նրա գաղափարակիցների և համակրողների համար, մանաւանդ այն անձանց, որոնց մտքի և լեզուի մշակողը «Մշակն» է եղել։ Ես, իբրև «Մշակի» համակրող ու «Մշակը» կարդալով մշակվող, ի սրտէ ուրախ էի, որ «Մշակը» թևակոխեց իր 40-ամեակը, և ցանկանում էի նրա տոկուն և անվեհեր ղեկավարներին և իրանց զինակիցներին երկար կեանք և ոյժ՝ նորից աշխատելու և առաջ տանելու իրանց ձեռքին ծածանվող սրբազան դրօշակը, որը անմահ Գրիգոր Արծրունին աւանդ է թողել ամբողջ հայութեան, իսկ համակրելի «Մշակին» տեսնել շատ 40-ամեակներ և մշակել շատ սերունդներ։

Բայց ինչ օգուտ դատարկ ցանկութիւններից։ Քանի որ ինձ իբրև հայի դառն է անմասն մնալ այն վեհ գործից, որին մասնակցեց համարեա թէ ամբողջ գիտակից հայութիւնը, ուստի յատկացնում եմ իմ աշխատութիւնից («Կայէնի ճանկերում», պիէս 5 գործ.) 100 օրինակ յօգուտ «Մշակի» ֆօնդի։ «Ինչով որ կարող եմ, նրանով գոհ եմ»—ասում է ժողովրդական առածը. ես էլ իմ ունեցածով ուզում եմ օգտակար լինել այն հրաշալի գործին, որին մասնակցեց ամբողջ գիտակից հայութիւնը։ Իմ սիրտս անբաժան է նրանց սրտից։

Աւ. Առաքելեան

40-ԱՄԵԱՅ ԱՒԱԳ «ՄՇԱԿԻՆ»

Քարվանսարայի հասարակութիւնը իր սեպուհ պարտականութիւնն է համարում շնորհաւորել հայ գիւղերում կուլտուրա և ինքնագիտակցութիւն մտցնող՝ հայ մամուլի պատմութեան մէջ աւագագոյն և չարքաշ «Մշակին» իր 40-ամեայ յոբելեանի առիթով։

Ցանկանում ենք հայ անդաստանում ցանած սերմերի աճող բուսումն և բազմաթիւ 40-ամեակներ։ Անգնահատելի է ձեր ծառայութիւնը մանաւանդ հայ գիւղերին։

Ծլիր, ծաղկիր, ստուերներդ փռիր հայ քրտնաջան գիւղացու արևակէզ ճակատին։

Կեցցեն «Մշակի» անխոնջ և շիտակ աշխատողները։

Փառք և պատիւ այդ հասակին։

Ի դիմաց հասարակութեան՝ լիազօրներ
Տանուտէր՝ Անդրէաս Պապեան, Մեսրոպ քահ. Եղէլեան, Արտէմ Նազարեան, Ալ. Աղասարեան, Յակոբ Եղիլեան, Միխակ Սիմէօնեան։

Քարվանսարա, 8 յունիսի

ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՄՈՒԼԻՆ

Մի հաստատութիւն, որ հիմնվել է բովանդակապէս ծառայելու իր ազգին ու իր շարունակութիւնը կարողացած է պահել 40 տարիներ չընկրկելով դրամական դժուարութեանց և այլն առաջ և մաքառելով ընդդէմ ժամանակի հոսանքի, մի անմոռանալի պարծանք է ազգի համար և ոչ մի սակաւ վեհ բան։ Այդ է մեր այսօրվան միակ առաջնորդող օրգան «Մշակը»։ Հիմա, ձեր՝ նրա գործիչների սրտում յղացած է մի սեպուհ պարտականութիւն՝ այդ հաստատութիւնը դնել աւելի ապահովված ու հզօր դրութեան մէջ, որ նա ապագայում պատրաստ լինի հանդգնաբէս պայքարել ի նպաստ այն ազգօգուտ խնդիրների, որ յետ ու առաջ իր հանդէպը կը կանգնեն։ Հետևաբար դուք ձեռնարկած էք միայն մի հնարաւոր միջոց՝ դիմել մեր փոքրաթիւ ազգին վասն դրամական պիտոյից, որ կը հարկաւորէ այդ աղագաւ, այն նկատմամբ՝ որ ազգին ևս պատկանում է փոխարինել նրա ջանքերին իր նուէրներով։ Սակայն մենք ևս արևելեան այս մի անկիւնից, փոքրաթիւ Նոր-Ջուղայի հայերս, ուրախ եմ յայտնել, համախորհուրդ՝ կարացած ենք ըստ մեր կարեաց՝ մի քանի լումայ նուիրել այդ սրբազան նպատակին, ուրեմն հաճեցէք ստանալ 108,55 ֆր. և յանձնել «Մշակի» Յոբելեանական ֆօնդի Յանձնաժողովին։

Աւել նուիրելով թէ տեղիս հայրենակցացս և թէ իմ իսկ խորին յարգանացս հաւաստիքը՝

Մնամ ձերդ բարեացակամ
Մկրտիչ Տէր-Սարգսեան

Բանդունգ (Ջաւա)

40-ԱՄԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՑ

Երևան, 22 մայիսի

Շնորհաւորում եմ համակրելի 40-ամեայ յոբելեանը «Մշակ» լրագրի, որին անշեղ կերպով բաժանորդ եմ գրվել հիմնադիր անմահ Գրիգոր Արծրունու հրատարակելուց մինչև այժմ, որը առանց շեղվելու հանդուցեալի դաւանանքից շարունակում է ընթանալ և՛ այժմեան ղեկավարների օրով։

Յաւերժ յիշատակ անմոռանալի Գրիգոր Արծրունուն. փառք և պատիւ այժմեան ղեկավարներին. սրտանց ցանկանում եմ, որ հայութիւնը շատ քառասուն տարիներ կատարէ պատուական «Մշակ» լրագրի յոբելեանը։

Շնորհաւորելով «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը, ուղարկում եմ 10 րուբլի աննըշան գումարը։ Գէորգ Անտօնեանց

«ՄՇԱԿԻ» ՏՕՆԸ

Այսօր մի տօն է ազգային,
Ի պատիւ իր ժիր «Մշակին»,
Որ քառասուն ձիգ տարիներ,
Մտորում է հայի ցաւեր,
Մարդավայել կեանք վարելու
Մի ապահով ճար գտնելու։

Ուսում, արուեստ և գիտութիւն
Եւ համերաշխ սէր, միութիւն,
Աշխատանք է նա քարոզում
Իր գոյութեան ամբողջ կեանքում,
Եւ պտղաբեր մի նոր կեանքի
Պարարտ հող է նա պատրաստում։

Արթուն աչքով հսկում է նա
Թշնամու դէմ պատուար դնել
Եւ հայ կեանքում խոր բուն դրած
Որոմները դուրս շպրտել։

Ուրախացիր, ով հիմնադիր,
Հոգով, Գրիգոր դու Արծրունի,
Որ քո սիրած «Մշակն» այսօր
Արժանի է այդպէս պատւի։

Մ. Ենգիբարեան

ԱՆԹԱՌԱՄ ՊՍԱԿ

Թախտաբազար, 20 մայիսի

Աւղանստանի սահմանի մօտից անկեղծ սրտով շնորհաւորում եմ պաշտելի «Մշակի» 40-ամեայ յոբելեանը, ի սրտէ ցանկանալով նրա ներկայ խմբագրական կազմին առաջադիմութիւն ու փայլուն ապագայ։ Թող մեր մէջ միշտ փայլէ «Մշակի» յաղթական դրօշը, որը կռւել է խաւարի և տգիտութեան դէմ, սերմանելով բոլոր հեռունքներում ազնիւ գաղափար։

Ինչպէս որ մինչև հիմա չեն թառամել «Մշակի» տաղանդաւոր անմահ խմբագիր Գր. Արծրունու առաջադէմ մտքերի ցանած սերմերի ծիլերը, թող այսուհետև ևս աւելի ծաղկեն ու զարգանան։

Աշոտ Թումեան

ԿԵՆՍԱՐԱՐ ԱՒԱՆԴ

Երևան, 21 մայիսի

Պատուական «Մշակ» լրագրիդ 40-ամեայ գոյութիւնը ինքն ըստ ինքեան մի խոշոր փաստ է, որ հայ ընթերցող հասարակութիւնը գիտակցել է և իր և ձեր լրագրի բարձր կուլտուրական կոչումը. իր, որ սրանից շատ առաջ երկար և ձիգ տարիներ մի բուռը հասարակութեան նուազ նիւթական ոյժով և միայն բարոյական խրախուսանքով կարողացել է պահել ձեր լրագրի գոյութիւնը. և ձեր, հնարաւորութիւն տալով ձեզ էլ ապացուցելու, որ դուք ոչ պակաս ճիգ և աշխատանք էք գործ դրել պահելու և առաջ մղելու հոգելոյս Գրիգոր Արծրունու թանգագին աւանդի իսկութիւնը։

Այնպէս որ՝ այսօրվայ «Մշակ» լրագրի 40-ամեայ տօնակատարութեան հանդէսը վստահ կարելի է համարել միաժամանակ և հայ հասարակութեան յաղթանակը իր ինքնագիտակցութեան զարգացման իբրև մի առողջ ապացոյց և գրաւական նրա ապագայ առաջադիմութեան։

Այժմ չը գնահատել թէ իր և թէ դրանով մենակ հայ լրագրի իրան հարազատ հասարակութեան մատուցած ծառայութիւնը՝ առնուազն յանցաւոր անտարբերութիւն կը լինէր։

Իբրև Երևանի հայ հասարակութեան մի անդամ և ձեր լրագրի երկարամեայ բաժանորդ՝ իմ բարոյական պարտքն եմ համարում ձեզ հետ միասին ուրախակցել այդ հազուագիւտ տօնախմբութեանը և սրա համար խմբագրութեանդ անուան փոխադրելով տասը րուբլի՝ խնդրում եմ ընդունել իբրև նուէր ձեր լրագրի ապագայ յարատև և աւելի արդիւնաւէտ հրատարակութեան ապահովութեան համար։

Իս. Տէր-Իսահակեան

ՅԱՂԹԱԿԱՆ ՄԵՌՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

Այն բազմաթիւ զրկանքների փոխարէն, որ «Մշակը» կրեց 40 տարվայ ընթացքում, նա վարձատրվեց մի չը տեսնված յոբելեանով... Այսպիսի շքեղ յոբելեաններ դեռ թող շատ անցնեն մեր սիրելի «Մշակի» գլխով, այն «Մշակի», որ խիզախօրէն մաքառեց և յաղթական դուրս եկաւ կատաղի փոթորիկների միջից 40 տարվայ ընթացքում...

Դեռ 8—9 տարեկան հասակում ես կարդում էի «Մշակը» ռուս-ճապօնական պատերազմի մասին, առանց իմանալու թէ ինչ է՝ «Մշակը», ինչ է Ճապօնիան, ինչ է պատերազմը...

Բայց այժմ «Մշակը» կանգնած է իմ առաջ իր բոլոր վեհութեամբ և ես խոնարհվում եմ նրա յաղթական ամբողջութեան առաջ...

Ողջոյն 40-ամեայ յոբելեար «Մշակին» իր անխոնջ աշխատանքի համար...

Աշակերտ

Իգդիր

ՇԻՏԱԿ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԻՆ

Առաջին անգամն է կեանքիս մէջ, որ բաժանորդ եմ գրվում «Մշակին»։ Իմ այս որոշման առիթ է ծառայել այն հանգամանքը, որ «Մշակը» չը վարանեց բաց ճակատով ճշմարտութիւնը պաշտպանել ազգային ընտրութիւնների հարցում. նա շիտակ մարդու նման համարձակ յայտնեց իր կարծիքը առանց յետին հաշիւների։ Թող այդտեղ Թիֆլիսում նստողները կամ կոյր կուսակցական հոգով բաժանվածներն ասեն՝ ինչ կուզեն, բայց իրողութիւնն այն է, որ հայ ժողովրդին «Մշակի» այդ շիտակ վերաբերմունքը շատ բան ասաց իր բարոյական հեղինակութեան մասին և շատ սրտեր գրաւեց և բարոյական մի շատ մեծ դաս տուեց հայ Դեղ-հոգի մարդկանց։

Արշակ ք. Տէր-Ոսկանեան

Մերվ

ՑԱՐԳԱՆՔ «ՄՇԱԿԻՆ»

Թիֆլիս, 18 մայիսի

Սիրելի խմբագիր.

Զատկից մի քանի օր առաջ հայրիկիս հետ «Մշակի» խմբագրատունը գալով, հայրիկս ներկայացրեց ինձ ձեզ հետևեալ խօսքերով.

— Իմ միակ որդին է, ձեր ապագայ աշխատակիցը։

Դուք սիրով ինձ ձեր ձեռքը մեկնեցիք։

Երբեք այդ քաղցր րոպէները կեանքումս չեմ մոռանալու։

Սիրում եմ ձեր «Մշակը», ինչպէս հայրիկս է սիրում։

Զատկի օրը հայրիկս ինձ նուիրեց 2 ր., որ ուղարկում եմ ձեզ «Մշակի» ապահովութեան համար, որ երկար, երկար ապրի, մինչև իմ մեծանալը։ Ուղարկում եմ այժմ այդ փողը. ներողութիւն որ քիչ է։

Ապրէ՛ ուրեմն «Մշակը», որ սիրում եմ լսել, երբ հայրիկս կարդում է միշտ մօտս։

Գիմնազիստ Բաբգէն Ա. Բէկ-Յովսէփեան

ՄԵՐ ՍԻՐԵԼԻ «ՄՇԱԿԻՆ»

Հայոց պատմութեան մէջ ասված է, որ Արտաշէս աշխարհակալը երբ ուզում էր իր զօրքի քանակութիւնը իմանալ, հրամայում էր ամեն մէկին մի-մի քար գցել, որից գոյանում էր մի մեծ բլուր։

Ուստի եթէ մեզանից ամեն մէկը նոյն իսկ մեր սուղ միջոցներից մի-մի րուբլի ձգէ հայ ազգի միակ անկեղծ «Մշակի» 40-ամեայ յոբելեանի գանձարկղը, կը գոյանայ րուբլիների բլուր-դէզ, և այն ժամանակ մեր յետագայ սերունդը կը տօնէր մեր միակ սրտացաւ բարեկամ «Մշակի» ոչ միայն 40-ամեայ յոբելեանը, այլ հազարամեայ յոբելեանը. ուստի ձգելով իմ մի րուբլին յիշեալ արկղում՝ հաւատացած եմ, որ ինձ կը հետևեն դեռ ևս չը մասնակցողները և կը ձգեն իրանց րուբլիները։

Կիւրեղ ս. Արզաբեան

Թէօդոսիա

ԳԱՂԱՓԱՐԻ ԿՐԹԱՐԱՆ

Բենդերգեազ (Պարսկ.), 10 մայիսի

Սրտիս խորքից անհուն ուրախութեամբ շնորհաւորում եմ «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը։

Սրտիս մօտիկ «Մշակին» շատ բան եմ պարտական։ Երկար տարիների ընթացքում նա թէ հայ հասարակութեան, թէ հարուստին, թէ աղքատին և թէ իր բաժանորդներին, որոնց թւում և նուաստիս, հոգեկան և մտաւորական սնունդ է մատակարարել։ Շատ բան եմ սովորել այդ լրագրից, շատ գաղափարներ իւրացրել, իւրաքանչիւր յօդուած կրկնել եմ, երեքկնել եմ, բայց դարձեալ անկուշտ եմ։ Այս հեռու վայրից, Պարսկաստանի խուլ անկիւնից յայտնում եմ, որ իմ միակ փափագն ու ջերմ բաղձանքն է տեսնել «Մշակն» աւելի բարգաւաճ և ծաղկեալ գոյութեան մէջ։

Իմ աղքատիկ լուման այսօր ուղարկում եմ յանուն Յանձնաժողովի փոխ-նախագահի։

Ներսէս Տէր-Յովհաննիսեան

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔՆԵՐ

Կուշկի, 23 մայիսի

Խորին ողջոյնս 40-ամեայ յոբելեար «Մշակին»։

Ծաղիկներ՝ թանգագին ժառանգութիւն թողնող Արծրունու գերեզմանին։

Պատիւ ու տոկունութիւն պանծալի ղեկավարներին։ Ֆրարի

Սամարղանդ, 22 յունիսի

Սրտիս խորքերից շնորհաւորելով «Մշակի» 40 ամեակի գոյութիւնը և նոր գոյութեանը յարատևութիւն ցանկանալով՝ խնդրեմ ընդունել չնչին նուէրս։

Ն. Շաքարեան

Կարսնովօդսկ, 21 մայիսի

Տեղիս հայ գաղութը, շնորհաւորելով «Մշակի» 40-ամեայ գործունէութեան յոբելեանը, ի սրտէ ցանկանում է նրան երկար տարիների առաջադիմութիւն և յարատևութիւն։ Մատթէոս Մահտեսի-Օհանեան

Սկոբելեվ, 1 յունիսի

Ձերդ համակրութեամբ խնդրում եմ ընդունէք իմ այս փոքրիկ լուման՝ 5 րուբլի, միացնելու բարի և ազնիւ «Մշակի» ֆօնդին. Թող պաշտելի «Մշակի» ֆօնդը կաթիլներով դարձվի ծով։ Ջերմեռանդ սրտով ցանկանում եմ «Մշակին» աջողութիւն։ Սողոմոն Միքայէլեան

Շուշի, 4 յուլիսի

Մեր հասարակութեան բուռն համակրութեան արժանացած «Մշակի» 40-ամեայ տօնի առիթով յայտնում եմ խորին և սրտագին ցնծութիւնս և բերկրանքս։

Ցանկանում եմ անմոռանալի Գր. Արծրունու սկսած փայլուն գործի ղեկավարներին էլ աւելի եռանդ ու անվեհերութիւն խորունկ կերպով պաշտպան հանդիսանալու հրապարակախօսական վեհ կոչման և ապագայում։ Աշոտ Ծզնաւորեան

Վըբօրգ, 23 յունիսի

Խնդրում եմ ընդունել իմ սրտագին շնորհաւորութիւնները և ողջոյնը՝ ազնիւ և անխոնջ «Մշակի» 40-ամեայ լուսաւոր գործունէութեան առիթով։ Ս. Ներսէսեան

Էնզէլի, 20 մայիսի

Անկեղծ զգացմունքներով շնորհաւորում եմ հայ ազգի բազմաշխատ և բազմարդիւն «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը և ցանկանում եմ թերթիդ յարատև գործունէութիւն։ Գ. Սարվարեան

Կուսապատ, 10 յունիսի

Սրտանց շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեակը. բարով արժանանայ այդպիսի մի յոբելեանի իր 100-ամեակին։

Փառք և պարծանք Գ. Արծրունու աճիւնին, որ ունի այնպիսի մի ժառանգ, որպիսին է «Մշակը», որ շատ քչերին է աջողվում ունենալ։

Ս. Տէր-Յովհաննիսեան

Արցեանիկ (Զանգ. գ.), 4 յուլիսի

Սիրելի «Մշակի» համակրողները և նրա 40 ամեայ յոբելեանի առիթով՝ հասարակութիւնը մատուցանում են իրանց անկեղծ գոհունակութիւնը «Մշակի» ղեկավարներին, ցանկանալով շարունակել անմահ Գրիգոր Արծրունու յիշատակը շատ 40-ամեակներ։

Արցեանիկի հասարակութեան կողմից՝
Յովսէփ Տէր-Յարութիւնեան

Խաչակապ (Գանձակի գաւ.), 26 մայիսի

Սրտի խորքից ողջունելով «Մշակի» 40-ամեայ յոբելեանը՝ ցանկանում եմ յոբելեար «Մշակին» յարատևութիւն։

Յ. Տէր-Աւետիքեան

Կարս, 24 մայիսի

«Մշակի» 40-ամեայ փառաւոր յոբելեանի օրը, երբ անմահ Արծրունու վեհ հոգին սաւառնում է իր արժանաւոր յետնորդների միջավայրում, թոյլ տուէք և իմ թոյլ ձայնս միացնել ամբողջ հայութեան ձայներին և ի սրտէ ցանկալ սիրելի «Մշակին» յարատևութիւն և աջողութիւն։

Նախկին թղթակից
Փիրի, Գանձակի և Ղզլարի՝
Կ. Գիւլնազարեան

Բալախանի, 10 յունիսի

Իմ սրտի անկեղծ ցանկութեամբ շնորհաւորում եմ «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը և կը ցանկամ աջողութիւն, որ դեռ շարունակվի անհուն դարեր և անընկճելի՝ հայ ազգի համար։

Ներսէս Յովհաննիսեան

Մեծ-Ղարաքիլիսա, 8 յունիսի

Հոգւոս պարտքն եմ համարում սրտի անհուն բերկրութեամբ ողջունել անմահ հիմնադիր Գրիգոր Արծրունու «Մշակ» լրագրի 40-ամեայ յոբելեանը։

Ցանկանում եմ, որ շատ ու շատ 40 տարիներ բոլորի և արթուն պահապան լինի ճնշվող ժողովրդի շահերին։

Երուանդ Մամիկոնեան

Մեծ-Ղարաքիլիսա, 15 յունիսի

Բարեմաղթում եմ հանգիստ արքայութիւն հանգուցեալ Գրիգոր Արծրունուն, իսկ ձեզ՝ խմբագիրներիդ և աշխատակիցներիդ երկար կեանք և աջողութիւն։

Գրիգոր Յակոբեան Նալբանդեանց

Հին-Նախիջևան, 6 յունիսի

Հին-Նախիջևանի քաղ. դպրոցի մի խումբ աշակերտների կողմից ողջունում եմ «Մշակի» 40-ամեակը. ցանկանում ենք երկար կեանք թղթակիցներին և առաջադիմութիւն լրագրին։

Աշակերտ՝ Ղունկիանոս Ամիրխանեան

Խաչմազ, 27 յունիսի

Սրտանց շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեայ գոյութեան յոբելեանը, ցանկանալով երկար կեանք և հարթ ճանապարհ՝ շարունակելու լոյս տարածել և թարմ պահել հայերիս մէջ Գրիգոր Արծրունու անունը։

Տումեցի «Тверъ»

Արմավիր, 3 յունիսի

Թէև ուշացած, բայց թոյլ տուէք շնորհաւորել «Մշակ» պատկառելի լրագրի 40-ամեայ գոյութեան յոբելեանը։

Թող ինտելիգենտական ազնիւ գործունէութիւնը յարատևէ նրա գոյութիւնը։

Կեցցէ, կեցցէ, կեցցէ։

Փառք և պատիւ ժողովրդական թերթին։

Լաւագոյն բարեմաղթութիւններով՝
մնամ՝
Հիմնադիր հաշուապահական դասընթացքների՝ Վ. Ա. Սլատկով

Արմավիր, 16 յունիսի

Թէև իմ նուէրը «Մշակի» ֆօնդին՝ 3 ր. մի չնչին գումար է, բայց ցանկութիւնս էր մասնակից լինել գաղափարական մեծ տօնին։ Անդրէաս Յակոբջանեան

Թիֆլիս, 26 մայիսի

Շնորհաւորում եմ «Մշակի» 40-ամեայ գործունէութեան յոբելեանը և ցանկանում եմ ապագայում աջողութիւն։

Վ. Վերմիշեան

Ղզլար, 17 մայիսի

Ցանկանում եմ «Մշակին» շատ տարիներ գործել աջողութեամբ։

Գէորգ Խանջարեանց

Երևան, 21 մայիսի

Ցանկանում եմ անկեղծօրէն պաշտելի լրագրիդ յարատևութիւն՝ կատարելու բազմիցս 40-ամեակներ, իսկ նրա անմահ հիմնադիր Արծրունու աշխատակիցներին եռանդուն գործունէութիւն։

Յովսէփ Տէր-Յովսէփեանց

Շահնազար գիւղ, 25 մայիսի

35-ամեայ անընդհատ բաժանորդս կը շնորհաւորեմ «Մշակի» 40-ամեայ յոբելեանը։

Սարգիս Վ. Եազըճեան

Ալուշկա, 29 մայիսի

Շնորհաւորելով «Մշակի» 40-ամեայ յոբելեանը՝ ի սրտէ ցանկանում եմ հայոց գրականութեան չարքաշ մշակին՝ նոյն եռանդով շարունակել և ապագայում իր արգիւնաբեր գործունէութիւնը, ինչպէս մինչև այժմս, հաւատարիմ մնալով իր հիմնադրի վսեմ գաղափարներին։

Ընդ սմին խնդրեմ ընդունէք իմ փոքրիկ լուման (3 րուբլի)։

Յակոբ Յովհաննեանց